



ՏԵՂԵԿԱԼԵ

ՎԻՐՏՈՒԱԼ ՓՈԽՀՈՍՔԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ (ՆԵԹ-ՄԵԹԵՐԻՆԳԻ) ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՓՈԽՀՈՍՔԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ներկայումս ինքնավար էներգաարտադրողը սեփական կարիքների համար կառուցում է արևային տեղակայանք, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ հետ կնքում պայմանագիր համակարգը էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ: Այնուհետև տեղադրվում են դարձափոխիչային(ռեվերսային) բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներ: Եթե տարեկան հաշվարկի արդյունքում մատակարարված էլեկտրական էներգիայի մեծությունը բացասական է, ապա Բաշխողն այդ չափով վերադարձնում է: Եթե տարեկան հաշվարկի արդյունքում ինքնավար էներգաարտադրողի կողմից տված էլեկտրական էներգիայի մեծությունը դրական է, ապա ինքնավար էներգաարտադրողին փոխհատուցվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի 50 տոկոսի չափով:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Առկա օրենսդրական դաշտի և փոխհոսքերի համակարգի իրավական կարգավորումների շրջանակներում որոշ սահմանափակող սկբունքներ կան: Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողը սեփական կարիքների համար կառուցած կայանի արտադրած էլեկտրաէներգիայի սպառումը պետք է իրականացնի հենց այնտեղ, որտեղ աբոնենտի ֆիզիկական հասցեն է, միաժամանակ կայանի հզորությունը պետք է համապատասխանի սպառող սարքերի տեղակայված հզորությանը:

Նշված սահմանափակումները չեն խթանում խոշոր էներգասպառող հանդիսացող և տարբեր հասցեներում գործունեությունը ծավալող աբոնենտների: Սա հատկապես կարևոր է Հայաստանի համայնքների համար, որոնք արդեն իսկ քաղաքական կամք են արտահայտել ՎԷՌ ներդրումներ կատարելու հարցում. Հայաստանի համայնքներից 23-ը միացել են էներգիայի և Կլիմայի խնդիրներին նվիրված Եվրոպական Քաղաքապետների դաշնագրին: Միաժամանակ, համայնքները հանդիսանում են խոշոր էներգասպառողներ, լինելով միաժամանակ բազմաթիվ համայնքային կառույցների տեր (օրինակ՝ վարչական շենքեր, մանկապարտեզներ, պոլիկլինիկաներ, մշակույթի և սպորտի տներ, արտաքին լուսավորություն և այլն) և էներգետիկ ծախսերի համար պատասխանատու: Համայնքային բյուջեն բոլոր համայնքային կառույցների շահագործման և պահպանման ծախսերի մասով միացյալ է: Թեև հնարավոր է համայնքային բազմաթիվ շենքերում ստեղծել տեղական, ինքնավար համակարգեր, սակայն այս ճանապարհով գնալով, համայնքը նախ կորցնում է ավելի խոշոր արևային տեղակայանք կառուցելուց հնարավոր մասշտաբի օգուտները, ստեղծում է համայնքային շենքերի տանիքների վրա ավելորդ բեռ դնելու խնդիր, ստեղծվում է

դրանց մաքրման աշխատանքների հետ կապված մարդկային ռիսկեր, կորում են լավագույն օրինատացիայից օգտվելու հնարավորությունները:

Ներկայումս շուրջ 1ՄՎտ և ավելի հզորությամբ արևային կայան կառուցելու դեպքում համայնքի կողմից կառուցված արևային տեղակայնքի արտադրված էլեկտրաէներգիան՝ ներկա իրավական կարգավորումների շրջանակում, համայնքը չի կարողանա օգտագործել սեփական կարիքները բավարարելու նպատակով, քանի որ իր ենթակայության հաստատությունները (համայնքային և հանրային շենքեր), արտաքին լուսավորության շահագործումը և պահպանում իրականացվում են տարբեր հասցեներում գործող համայնքին պատկանող իրավաբանական անձանց կողմից, առանձին հաշվիչներով և աբոնենտային համարներով: Մինևույն ժամանակ համայնքների կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծավալներն ունեն աճման միտում, ինչը ի հայտ է եկել համայնքների կողմից մշակված կայուն էներգետիկ գործողությունների ծրագրերի մշակման ընթացքում:


Ներկայումս միջազգային փորձը համայնքային ՎԷՌ կայանների կարգավորման ոլորտում գնում է համայնքային միկրո- կամ վիրտուալ ցանցերի ստեղծման պիլոտային ճանապարհով: Հաշվի առնելով Հայաստանում համայնքային, բաշխված ՎԷՌ էլեկտրակայանների զագրացման նպատակահարմարությունը՝ ազգային էներգետիկ անվտանգության, համայնքային տնտեսության զարգացման և ֆինանսական աողջացման տեսանկյուններից, առաջարկում ենք դիտարկել ՀՀ-ում այս ոլորտում ստեղծել համայնքային պիլոտների մեխանիզմ, որով կփորձարկվի խոշոր, համայնքապատկան ՎԷՌ էներգակայանքի արտադրած էլեկտրաէներգիայի սպառման կարգավորումը համայնքային կառույցներում՝ փոխհոսքերի կարգավորման սկզբունքով:

ՎԻՐՏՈՒԱԼ ՆԵԹ-ՄԵԹԵՐԻՆԳԸ

Վերականգնվող էներգետիկայի նոր հզորությունների խթանման և էլեկտրաէներգետիկ ծառայությունների շուկայի կազմակերպման առաջատար ԱՄՆ-ում համայնքային ՎԷՌ կայանների խնդիրը լուծվել է փոխհոսքերի վիրտուալ կարգավորման (վիրտուալ նեթ-միթերինգ¹) հաշվարկային համակարգի ներդրմամբ, որը հաջողությամբ գործում է 14 նահանգներում: Համակարգը ներդրվել է Հունաստանում, Կանադային Օնտարիո նահանգում, Բելգիայում և այլուր:

¹ Virtual net metering


Վիրտուալ նեթ-միթերինգը դա հաշվարկային համակարգ է, պայմանավորվածություն, որը թույլ է տալիս մի քանի գույքային սեփականություն ունեցող իրավաբանական անձին տրամադրել իր կողմից կառուցված արևային տեղակայանքի արտադրած էլեկտրաէներգիան տարբեր ֆիզիկական հասցեներում գտնվող իր գույքային միավորներին:



Վիրտուալ նեթ-միթերինգը համայնքների, ինչպես նաև խոշոր էներգասպառողների համար գրավիչ է դարձնում արևային տեղակայանքի կառուցումը սեփական կարիքները բավարարելու համար՝ «սեփական կարիքների» լայն իմաստով: Համայնքը հնարավորություն կունենա կառուցելու արևային տեղակայանք ցանկացած վայրում, ունենալ դարձափոխիչային ռեվերսային բազմասակագնային էլեկտրոնային 1 հաշվիչ, որի միջոցով կհաշվառվի արտադրված էլեկտրաէներգիան և կփոխհատուցվի տարբեր հասցեներում գտնվող և առանձին հաշվիչներ ունեցող համայնքային շենքերի և շինությունների, արտաքին լուսավորությունը սպասարկող համայնքային կազմակերպությունների կողմից սպառված էլեկտրաէներգիան (յուր. կազմակերպության հաշվիչով ֆիքսված ծավալը), իսկ ավելցուկը վաճառել ցանցին՝ ներկայումս գործող փոխհատուցման մեխանիզմի համաձայն՝ հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի 50 տոկոսի չափով:

Այս մոդելը հնարավորություն կտա համայնքային վիրտուալ միկրոցանցերի՝ համակարգված տեղային ցանցերի զարգացմանը, որը կսպասարկվի միմյանցից հեռու գտնվող մեկ կամ մի քանի էներգիայի աղբյուրների կողմից և կսնուցվի ինչպես վերականգնվող, այնպես էլ ավանդական բաշխիչ ցանցի էներգիայով: Վերջնական սպառող կհանդիսանա ամբողջ համայնքը: Բաշխման ծառայություն մատուցող կազմակերպության համար էլ հնարավորություն է ստեղծվում օգտվելու տվյալ տեղանքում գտնվող լրացուցիչ մատակարարից՝ դրանով իսկ մեծ հեռավորությունների վրա էլեկտրաէներգիայի տեղափոխման հետ կապված կորուստները նվազեցնելով:

Երկարաժամկետ կտրվածքով այս բարեփոխումը կբարձրացնի համայնքային ՎԷ ներդրումների գրավչությունը, կառաջացնի համայնքային բյուջեի խնայողություններ, որոնք կարող են օգտագործվել համայնքային տնտեսության այլ կարիքների համար, կստեղծի համայնքներում լրացուցիչ ֆինանսական եկամուտների աղբյուր, կնպաստի տեղական աշխատատեղերի ստեղծմանը, կօգնի համայնքների ֆինանսական անառնազացմանը, որը թույլ կտա նվազեցնել պետական բյուջեից համայնքների կախվածությունը:



«ԲՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման (EU4STED)» ծրագիրն իրականացվում է Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները: